ԿԱՐԾԻՔ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր Հետազոտական վարժարանի սովորող Նարե Մելիքյանի «Վիշապները մշակույթներում» հետազոտական աշխատանքի վերաբերյալ

Ինձ համար շատ ուրախալի է, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում իրականացվում են նմանօրինակ հետազոտություններ:

Ինչպես իր աշխատանքում նկատել է հետազոտող Նարե Մելիքյանը, վիշապի կերպարը բարդ է, այն իր մեջ ներառում է արքետիպային պայքարի տարրեր: Ինքս շատ եմ կարևորում Նարե Մելիքյանի կողմից արված ինքնուրույն վերլուծություններն ու մեկնաբանությունները: Հետաքրքիր է և գովելի, որ հետազոտողը կարողացել է համադրել վիշապի կերպարը, ընկալումը տարբեր մշակույթներում և միաժամանակ անդրադարձ կատարել նույն թեմային՝ արդեն համադրելով արդի ֆիլմերն ու համակարգչային խաղերը:

Նարե Մելիքյանին խորհուրդ կտամ հաջորդ անգամ անպայմանորեն ուշադրություն դարձնի տեքստի կետադրությանն ու ուղղագրությանը: Մի շարք հատվածներում նախադասությունները սկսվում են փոքրատառերով: Իհարկե, սա տեխնիկական բնույթի խորհուրդ է և բոլորովին չի ազդում աշխատանքի որակի և հետազոտողի կողմից իրականացված աշխատանքի որակի վրա: Նարե Մելիքյանը կարծես թե զգացել է, որ վիշապին պետք է դիտարկել բարուց և չարուց անդին: Իրականում, շատ հաճախ վիշապը հենց տարերքն է: Միջնադարում, սակայն, ինչպես նկատել է հետազոտողը, վիշապի կերպարը ենթարկվել է վերափոխումների: Խիստ կարևոր է, որ Նարե Մելիքյանն առանձին հետազոտություն է իրականացնելու վիշապի կերպարին հայոց մշակույթում և ընկալումներում: Այդ պարագայում, իմ ունեցած գիտելիքների և կարողությունների սահմաններում սիրով պատրաստ եմ առաջարկել իմ աջակցությունը:

Միքայել Բաղալյան պատմական գիտությունների թեկնածու, հնագետ

«Էրեբունի» ՊՀԱԹ-ի տնօրեն

07.04.2024 թ.